ՀՏԴ 728+72.012; 747.012

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա.Ա.Մելիքյան

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԴԻԶԱՅՆԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Դիտարկվել են ճարտարապետության և բնակարանի առարկայական միջավայրի փոխկապակցվածության հիմնախնդիրները, ինչպես նաև բնակելի միջավայրի կազմակերպման գործընթացում դիզայնի դերն ու նշանակությունը: Ներկայացվել է նաև առկա շուկայական տնտեսության պայմաններում բնակելի միջավայրը կազմակերպող հայրենական արտադրության ապրանքատեսակների արդիականությունը՝ որպես հայրենական դիզայնի զարգացման խթան: Ուսումնասիրվել են ճարտարապետության և դիզայնի փոխկապակցվածության տեսական դրույթները՝ զուգահեռներ անցկացնելով որոշ ճարտարապետական ուղղությունների միջև:

Առանցքային բառեր. *ճարտարապետություն, դիզայն, բնակարան, առարկայական միջավայր, բնակելի ինտերիեր, գործառույթ*

Բնակելի միջավայրի նյութական մշակույթի արժեքի ձևավորման հիմնախնդիրը ճարտարապետական և դիզայներական բնագավառների կարևոր առաջադրանքն ու նպատակն է:

Բնակարանային շինարարության ծրագրերի իրականացման արդյունքների գործնական դիտարկումները ցույց են տալիս, որ այն մեծ տնտեսական ու տեխնիկական մասշտաբը, որում իրականացվում է այդ գործընթացը, միանշանակ չի հարաբերակցվում դիզայնի և ճարտարապետության գործառույթի հետ՝ դրանց գործառույթի մշակութային առումների ըմբռնմամբ: Հաճախ դրա հիմքում ոչ թե տնտեսական կամ տեխնիկական պատճառներն են, այլ մտավոր խոչընդոտները, որոնց դրսևորումն է ժամանակակից հասարակության բնակելի միջավայրի ձևավորման գործում մշակութային արժեքների նշանակության ոչ լիարժեք ըմբռնումը:

Իրական փոփոխությունների և բարելավման հասնելու համար այս դժվար հիմնախնդրի լուծումը պահանջում է ստեղծագործական միջավայրի և մեր երկրում դիզայնի համար պատասխանատու պետական ձեռնարկությունների մեծ ակտիվություն: Այս հիմնախնդրի նշանակությունը լիովին գնահատում են միջազգային կազմակերպությունները, որոնք միավորում են ստեղծագործական միությունները:

Բնակելի միջավայրի ձևավորման պահանջներին ծառայող տարբեր առարկաների և տեխնիկական սարքավորման արտադրության ոլորտում զարգացող դիզայնը որոշում է նաև միջազգային ապրանքաշրջանառության մեջ գտնվող հայրենական ապրանքների մշակութային

արժեքը: Զարգացող ապրանքափոխանակումը մեծացնում է փոխադարձ ազդեցությունը երկրների ներքին շուկաների և հասարակությունների պահանջմունքների բավարարման օբյեկտիվ հնարավորությունների վրա:

Ժամանակակից բնակարանի և քաղաքային միջավայրի, բնակելի ինտերիերի համար նախատեսված տեղակայումների և արտադրատեսակների միջև գոյություն ունի բարդ փոխադարձ կապ: Այդ երեք բաղադրիչների կազմակերպման հիմնական նպատակն է բնակարանում գործընթացների օպտիմալ քայլին հասնելու ձգտումը:

Բնակարանի տարածական-հատակագծային չափանիշները սահմանափակվում են մի շարք սոցիալ-տնտեսական գործոններով: Դրա շահագործումը բարդանում է նաև գերբնակվածության պատճառով, ինչն էլ հանգեցնում է անհամապատասխանության բնակարանի կառուցվածքի և բնակիչների կառուցվածքի միջև: Հանգամանքները պահանջում են նյութական բնակելի միջավայրի կազմակերպման ռեզերվների որոնում:

Բնակարանում գործընթացների օպտիմալ ընթացքին հասնելու համար անհրաժեշտ է ռեզերվներ որոնել, առաջին հերթին, բնակելի ինտերիերի համար նախատեսված արտադրատեսակներում: Դրանք հնարավորություն են ստեղծում դիզայնի այն որակների դրսևորման համար, որոնք գործուն են և արագ սոցիալական արդյունք են ապահովում կենցաղի վերակառուցման միջոցով: Ցավոք, հայկական հասարակության մեջ դիզայնի հնարավորությունները դեռևս լիարժեք չեն օգտագործվում: Չեն կիրառվում բնակելի ինտերիերի համար արտադրատեսակների անվանացուցակի և տեսականու օպտիմալացման մեթոդները: Այդ ամենը խոչընդոտում է բնակարանը պատրաստի արտադրատեսակներով սարքավորելու բարելավմանը և բացասաբար է ազդում բնակության գործընթացներին: Բնակելի ինտերիերի համար արտադրատեսակների ոչ օպտիմալ տեսականին չի նպաստում ժամանակակից կենսակերպի հաստատմանը:

Բնակելի ինտերիերի համար արտադրատեսակները չպետք է լինեն արտերկրյա նմուշների պատճեներ: Օտար արտադրատեսակների և սպառման մոդելների ընդօրինակումը նպաստում է մեզ համար խորթ վարքագծի ձևերի ներթափանցմանը: Հետևաբար, որպեսզի բնակելի ինտերիերի համար արտադրատեսակների անվանացուցակը և տեսականին հայրենական լինեն, անհրաժեշտ է հաշվի առնել կյանքի իրական պայմանները մեր երկրում, այսինքն՝ որոշել դրանք գոյություն ունեցող, կառուցվող և ապագա բնակելի ֆոնդի, ընտանիքների որակական և քանակական կազմի, բնակարանների բնակվածության աստիճանի, հմտությունների և սովորույթների հաշվառմամբ:

Դիզայնի զատումը, մի կողմից, ճարտարապետական նախագծումից և մյուս կողմից՝ կիրառական արվեստի արհեստավորական գործելակերպից սերտորեն կապված է ճարտարապետական-գեղարվեստական գործելակերպում XX դարի սահմանագծին տեղի ունեցած արմատական փոփոխությունների հետ: Այդ ժամանակ են ձևավորվել նոր

պատկերացումները նախագծման օբյեկտի մասին և դրանց համապատասխանող պատկերացումային և գրաֆիկական մասնագիտական միջոցները [1]:

Այս շարժման սկզբնական փուլում բարենորոգչական տեսական դրույթները հավասարապես հիմնվում էին ստեղծագործության երկու ոլորտների փորձի վրա: Այդպիսին էր Ուիլյամ Մորրիսի գեղագիտական ծրագիրը՝ գեղարվեստական ձևը հավասար է նյութին՝ գումարած դրա մշակման եղանակը: Իր առավել լիարժեք մարմնավորման մեջ՝ վաղ մոդեռնիզմում այդ ծրագիրը հանգեցրել է ճարտարապետության և կիրառական արվեստի միջև սահմանագծի ճապաղման, թեկուզ կարճ ժամանակով միասնական ճարտարապետական-գեղարվեստական նախագծման առաջացման [2]:

Այդ ելակետային չտարբերակվածությունից է սկիզբ առնում ժամանակակից ճարտարապետության և դիզայնի տարամետ զարգացումը: Վագների հայեցակարգը, որն անմիջականորեն բխում էր մոդեռնի փորձի ամփոփումից (ձևը հավասար է գեղարվեստորեն իմաստավորված կոնստրուկցիային) արդեն զուտ ճարտարապետական հայեցակարգ էր: Ճարտարապետության և ծնունդ առնող դիզայնի տարբերություններն առավել մեծ չափով դրսևորվեցին գործառութային պատկերացումների զարգացման մեջ [1]: Ֆունկցիոնալիզմի սկզբունքը՝ «ձևը հետևում է գործառույթին», միանգամայն տարբեր կերպ էր իմաստավորվել դիզայնում և ճարտարապետությունում, առաջին հերթին՝ ճարտարապետության և կիրառական արվեստի ավանդական օբյեկտների տարբերության պատճառով:

Ճարտարապետությունում գործառութային մոտեցումը, մշակելով օբյեկտի իմաստավորման իրեն հատուկ եղանակները և յուրահատուկ գրաֆիկան (բլոկ-սխեմաները, շարժման գրաֆիկները, գոտևորման սխեմաները և այլն), ստեղծում է բոլոր այդ միջոցները նախագծվող օբյեկտի ներքին տարածությունում կատարվող գործունեության գործընթացների կառուցվածքային պատկերման համար: Ավելի մեծ խումբ սոցիալական գործընթացների և հարաբերությունների իմաստավորման հետ մեկտեղ ֆունկցիոնալիզմը, բնականաբար, ընդլայնում էր նաև նախագծման օբյեկտի սահմաններն առանձին շենքից մինչև քաղաքի մասշտաբները և տարաբնակեցման համակարգերը: Գործառութային գաղափարախոսության ճգնաժամը ճարտարապետությունում մեծապես պայմանավորված էր հենց օբյեկտի էքստենսիվ ընդլայնման սահմանների նվաճմամբ: Կիրառական արվեստի բնագավառում ֆունկցիոնալիզմը վեր հանեց օբյեկտը՝ նյութական կետը, որն ընկղմված է գործընթացի տարածության մեջ: Նախագծման այդ օբյեկտը գտնվում է տարբեր գործառութային գործընթացների և հարաբերությունների հատման կետում: Հետևաբար, «գործառույթի» իմաստավորման միջոցներն ու մեթոդները դիզայնում պետք է էապես տարբերվեն ճարտարապետական նախագծման համանման միջոցներից (համեմատենք իրենց նշանակությամբ նման գործառութային սխեմաները ճարտարապետությունում և էրգոնոմիական սխեմաները դիզայնում): Գործառութային կողմնորոշման միասնականությունն էլ հենց «առեղծվածային» ձևով բերեց ճարտարապետության և արդյունաբերական արվեստի տեսաբաններին դեպի

հետազոտման ու նախագծման միանգամայն տարբեր միջոցների, հնարների և օբյեկտների ձևավորումների: Դիզայնն իր համար բացահայտեց սոցիալական՝ արտադրատեխնոլոգիական, տնտեսական, բարձր վարկանիշային և այլ հարաբերությունների աշխարհը՝ որպես իրերի ստեղծման և լինելության իրական ոլորտ: Ուշադրության կենտրոնը (հատկապես առևտրական գործելակերպի տարերքում) արտադրատեսակի ձևը գեղագիտական կանոնին համապատասխանեցնելուց տեղափոխվում է տարբեր ուղղություններ ունեցող սոցիալական-գործնական պահանջների բարդ համալիրի բավարարման վրա: Մասնագիտական շահերի և հմտությունների նոր շրջանակը դիզայների համար ճանապարհ է հարթում դեպի համալիր սոցիալ-արտադրական և կազմակերպական խնդիրների լուծում, ընդ որում դիզայներական գործունեությունը կարող է ամենևին էլ կապ չունենալ իրերի՝ որպես այդպիսիների նախագծման հետ (նոն-դիզայն) [3]:

Գործառութային կողմնորոշման հետ մեկտեղ, երբեմն դրա հետ համակեցության, իսկ երբեմն էլ՝ կտրուկ հակադրության մեջ, ճարտարապետական-գեղարվեստական գործելակերպում զարգանում էր ձևական-հորինվածքային կողմնորոշումը: Դրա գաղափարախոսները սեփական տեսության բնագավառն էին համարում առաջին հերթին գեղարվեստական ձևի կառուցման օրենքների և միջոցների սահմանումը: Այդ կողմնորոշումը հենվում էր գեղարվեստական գործունեության ավանդական արժեքների և հնարների վրա, որոնք ընդհանուր են ճարտարապետության և դիզայնի համար: Մինչև օրս էլ ապագա ճարտարապետների և դիզայներների պատրաստման մեջ օգտագործվող ձևական հորինվածքի դասընթացները գործնականում նույնական են ըստ կիրառվող հասկացությունների (մետր-ռիթմ, նրբերանգ-հակադրություն և այլն) և նշանային միջոցների բնույթի («ձևական-հորինվածքային գրաֆիկա»):

Նախագծման ավանդական գործելակերպում հորինվածքն օբյեկտ-իրի կառուցման եղանակ է՝ հիմնված օբյեկտի և դրա իրային պատկերի նույնականության ճանաչման վրա: Ճարտարապետությունը և կիրառական արվեստը՝ որպես մարդկային գործելակերպի տեսակներ, առանձնանում են իրի նկատմամբ գեղագիտական վերաբերմունքով, ընդ որում գեղագիտական արժեքը սովորաբար պատկերացվում է որպես իրին բնորոշ հատկություն:

Իրերի աշխարհը գոյություն ունի մարդու կողմից յուրացված տարածություններում, որոնք տարբեր մասշտաբներ և գործառութային նշանակություն ունեն [4]: Տարածությունների բարդ համակարգում դիզայնի օբյեկտները ոչ միայն ծառայում են օգտապաշտական-գործառութային նպատակներին, այլև շատ կարևոր դեր են կատարում միջավայրի գեղագիտական կազմակերպման գործում, ինչը զգալի չափով որոշվում է իրերի և տարածությունների փոխգործողության բնույթով:

А.А.Меликян

ПРОБЛЕМЫ ВЗАИМОСВЯЗИ КВАРТИРНОГО ДИЗАЙНА И АРХИТЕКТУРЫ

Рассмотрены проблемы взаимосвязи архитектуры и предметной среды квартир, а также роль и значение дизайна в процессе организации жилой среды. Представлена актуальность товаров отечественного производства при нынешних условиях рыночной экономики, как стимул развития отечественного дизайна. Рассмотрены теоретические аспекты архитектуры и дизайна, проведены параллели между определенными архитектурными направлениями.

Ключевые слова: *архитектура, дизайн, квартира, предметная среда, жилой интерьер, функция*

A.A.Melikyan

THE ISSUES OF INTERCONNECTION OF HOME DESIGN AND ARCHITECTURE

The issues of interconnection of architecture and material environment of house were observed, as well as the role of design in the process of organizing the residential environment. The relevance of domestically produced goods in the field of residential environment organization in the conditions of modern market economy was considered as a stimulus for the development of domestic design. Theoretical provisions of interconnection of architecture and design were observed by drawing parallels between certain architectural aspects.

Keywords: *architecture, design, apartment, objective environment, residential interior, function*

Գրականություն

1. **Рутманис В.К.** Введение в теорию дизайна: Методологические проблемы. - Рига: БРИ, 1998. - 154 с.
2. **Крылова Н.Б.** Эстетические отношения: содержание и функции.- М.: Знание, 1984. - 64 с.
3. **Овсянников М.Ш.** История эстетической мысли. - М.: Высшая школа, 1978. - 352 с.
4. **Быстрова Т.Ю.** Вещь. Форма. Стиль: Введение в философию дизайна. - Екатеринбург: Издательство Уральского университета, 2001. - 288 с.

Մելիքյան Արտաշես Արսենի, ճ.թ., դոց. *(ՀՀ, ք.Երևան)-ՃՇՀԱՀ, Դիզայն միջավայրի նախագծման ամբիոնի վարիչ, (+374) 91221138: e-mail: artashesmelikyan@rambler.ru*
Меликян Арташес Арсенович, к.архит., доц. *(РА, г.Ереван) – НУАСА, зав.кафедры проектирования дизайн среды, (+374)91221138: e-mail: artashesmelikyan@rambler.ru*
Melikyan Artashes Arsen, doctor of Philosophy (Ph.D) in Architecture, associate prof. *(RA, Yerevan) - NUACA, Head of department of Design environment; (+374)91221138: , e-mail: artashesmelikyan@rambler.ru*

Ներկայացվել է՝ 15.03.2016թ.
Ընդունվել է տպագրության՝ 24.03.2016թ.